# ՔԷՆԹԸՐՊԸՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

## ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

## ԱՄԵՆ. ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ

Լամպէթ Պալաս, 1960

Ձերդ Ամենապատուութիւն, սիրեցեալ եղբայր մեր ի Քրիստոս.

Անգամ մը եւս, մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի Ծննդեան Տօնը առիթ կ'ընծայէ մեզի մտածելու Աստուծոյ անսահման սիրոյն, որ համաձայն մեր առաքելագրքի բառերուն, «Տուաւ Իր Միածին Որդին, որ առնելով մեր մարդկային բնութիւնը, ծնաւ ի Ս. Կոյսէն, փրկելու համար մարդկութիւնը մեղքէն ու չարիքէն»:

Բոլոր քրիստոնեաները, ուր որ ալ գտնուին անոնք, կը դառնան դէպի Այրը, ուր Ս. Կոյսը կը դիտէ Նորածին Մանուկը, եւ միացած հովիւներու եւ մոգերու՝ կը մատուցանեն իրենց պաշտամունքը Անոր՝ որուն մէջ «Բնակէ ամենայն լրումն աստուածութեան մարմնապէս» (Կողոս. Բ. 9): Սահմաններ կրնան բաժնել Եկեղեցիները, բայց անոնք կը գերանցուին, բոլորիս պաշտելով Փրկչի մեր պաշտամունքին մէջ:

Այսօր ձայներու Բաբելոն մը, որ Աստուծմէ չի գար, կը փորձէ գրաւել ուշադրութիւնը մարդկութեան, առաջնորդելով ժողովուրդները ամօթի եւ ողբերգութեան: Քրիստոնեայ աշխարհը այժմ, երբեմնի առաքելոց պէս, պէտք ունի տեսնելու անտեսանելին, «Զանեւրեւոյթն իբրեւ զտեսանելի», ինչպէս գրուած է Եբրայեցւոց Թուղթին մէջ (Եբր. ԺԱ. 27):

Ինչպէս որ քրիստոնեայ աշխարհը Յիսուսի Ծննդեան Տօնին կը կրկնէ հրեշտակներու համերգը, «Փառք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», մենք ալ մեր կարգին միացնենք մեր աղօթքները, աշխարհի խաղաղութեան եւ Եկեղեցիի բարօրութեան համար:

Իմ սրտագին մաղթանքն է որ ամենակարողն Աստուած Ձերդ Ամենապատուութեան եւ Ձեզմով գլխաւորուած Միաբանութեան եւ ժողովուրդին շնորհէ Աստուծոյ սէրն ու խաղաղութիւնը, արբազան այս Տօնին առիթով, որպէսզի փարատին բոլոր թիւրիմացութիւնները մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի սիրոյն մէջ:

Ձեր սիրեցեալ եղբայրն ի Քրիստոս
ՃԷՕՖՐԻ
Արքեպս. Քենթըրպըրիի

Նորին Ամենապատուութիւն
Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան
Պատրիարք Հայ Երուսաղէմի

# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● *Կիր. 1 Յուն. 1961 — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան։*

● *Դշ. 4 Յուն. — Կէսօրէ վերջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը «Հրաշափառ»ով մուտք գործեց շքեղօրէն զարդարուած Մայր Տաճար, ուր նախագահեց մեծահանդէս նախատօնակին ու թափօրով բարձրացաւ Պատրիարքարան։*

● *Եշ. 5 Յուն.* — Ս. Դաւիթ մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղբօր *տօնը* — Տօն Առաքելական Ս. Աթոռոյս Երուսաղէմի — *այս տարի կատարուեցաւ մեծաշուք հանդիսաւորութեամբ եւ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր՝ որ, ըստ սովորութեան, «Փառք ի բարձունս»ի ատեն բարձրացաւ Տեառնեղբօր Աթոռի պատուանդանին՝ ուր մնաց մինչեւ ժամերգութեան աւարտումը, երբ ընդունեց Միաբանութեան եւ ուսանողութեան շնորհաւորութիւնները՝ աջահամբոյրով։ «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի ընթացքին, Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. յատուկ մաղթանքներ ըրաւ Ն. Ամենապատուութեան — Տեառնեղբօր Աթոռի արժանաւոր Գահակալին — բարօր կենաց եւ արեւշատութեան եւ Ս. Աթոռոյս պայծառութեան եւ անսասանութեան։ Նմանօրինակ մաղթանքներ ըրաւ նաեւ օրուան պատարագիչը՝ Գերշ. Տ. Նորայր Եպս. իր քարոզի վերջաւորութեան։ Քարոզի բնաբանն էր «Յիշեա, Տէր, զԴաւիթ եւ զամենայն հեզութիւն նորա»։ Պատարագիչ Սրբազանը ցոյց տուաւ հեզութիւնը իբրեւ քրիստոնէական կրօնի մեծագոյն առաքինութիւններէն մին, նախապայմանը հոգեկան մեծութիւններու եւ բարոյական յաղթանակներու։ Քարոզէն ետք, ընկալեալ սովորութեան համաձայն, տեղի ունեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթոռոյս հանգուցեալ պատրիարքաց հոգիներուն համար, հանդիսապետութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր։ Իսկ Ս. Պատարագէն ետք, Պատրիարք, Միաբանութիւն եւ ժողովուրդ «Օրհնեցէք զՏէր» — Ս. Աթոռոյ շարականը — երգելով թափօրով բարձրացան Պատրիարքարան։*

digitised by A.R.A.R.@

● Ուր. 6 Յուն. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Ս. Ստեփանոսի հանդիսաւոր նախատօնակին։ Տօնին բուրվառակիրներն էին Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. և Հոգշ. Տ. Գեղամ Աբեղայ։

● Շբ. 7 Յուն. — Ս. Ստեփանոս նախասարկաւագի տօնը այս տարի Ս. Աթոռէն ներս կատարուեցաւ մեծ շուքով։ 7 Սարկաւագներ և 4 Ուրարակիրներ, գեղազարդ սաղաւարտներով և ոսկեթել շապիկներով, տապանակ և բուրվառ ի ձեռին, առաջնորդութեամբ երկու խնկարկու վարդապետներու, պանծացուցին յիշատակը իրենց մարտիրոսապետին։ Հանդիսութեան կը նախագահէր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը։ Ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ՝ Մայր Տաճարի աւանդատան — Ս. Ստեփանոս մատրան — սուրբ սեղանին վրայ։ ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղամ Աբղ. Ջաքարեան։

● Կիր. 8 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետս։ ժամարարն էր Հոգշ. Տ. Արշակ Աբղ. Խաչատուրեան։ Ս. Թրգմ. Վարժարանի Երկրորդական բաժնի և Նախակրթարանի աշակերտութիւնը և ուսուցչութիւնը ստացան Ս. Հաղորդութիւն։

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեան։

● Բշ. 9 Յուն. — Ս. Պետրոսի եւ Պօղոսի առաքելոց տօնին առթիւ, Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատրան մէջ։ ժամարարն էր Հոգշ. Տ. Փառէն Աբղ. Աւետիքեան։ Ս. Թրգմ. Վարժ.ի Մանկապարտէզի բաժնի աշակերտութիւնը Հաղորդուեցաւ։

— Կէսօրէ վերջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը «Հրաշափառ»ով մուտք գործեց Մայր Տաճար, ուր նախագահեց մեծահանդէս նախատօնակին ու թափօրով բարձրացաւ Պատրիարքարան։

● Գշ. 10 Յուն. — Ս. Որդւոց Որոտման տօնի օրը եւս հոգեւոր ուրախութեան մեծ օր մը եղաւ Ս. Աթոռոյս համար։ Առաւօտեան ժամերգութենէն ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ և ապա ամպհովանիի տակ, կենաց Փայտի մասունքն ի ձեռին, նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած եռազարդ մեծահանդէս թափօրին, ու Պատրիարքարանի դահլիճին մէջ օրհնուած նշխարներ բաշխեց Միաբանութեան ու ներկայ ժողովուրդին։

● Շբ. 14 Յուն. — Ամանորի առթիւ, ըստ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց ժամօրհնող Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր։ Ապա, Ս. Աթոռոյ շարականը երգելով, Միաբանութիւն և ժողովուրդ բարձրացան Պատրիարքարան, ուր Ս. Պատրիարքը իր Նոր Տարւոյ շնորհաւորական խօսքերէն ետք, ըստ սովորութեան, բաշխեց բոլորին մէկական նարինջ։

● Կիր. 15 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ ժամարարն էր Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան։ Քարոզեց Հոգշ. Տ. Կարիւն Վրդ. Մանուէլեան, ծանրանալով «Զի՞նչ օգտիցի մարդ՝ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ» խօսքին վրայ ու խօսելով մարդկային կեանքի մէջ ընչաքաղցութեան պատճառած վնասներու մասին։

● Դշ. 18 Յուն. Ճրագալոյց Ս. Ծննդեան։ Առաւօտեան ժամը 9.45ին, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը Մայրավանքի դռնէն ինքնաշարժերու շարանով մը ճամբայ ելաւ դէպի Ս. Ծննդեան քաղաքը՝ Բեթղեհէմ։ Ճամբուն կէսին, թափօրը դիմաւորուեցաւ Բեթղեհէմի Գայմագամին, Քաղաքապետին, Ոստիկանապետին, այլ բարձրաստիճան պաշտօնեաներու և անձնաւորութիւններու, ինչպէս նաև հայ գաղութի ներկայացուցիչներու կողմէ։ Զինուորական զանազան պատիւներու արժանանալէ և պատուասիրուելէ ետք, պատկառելի այս թափօրը ժամը 11ին հասաւ Ս. Ծննդեան վանուց հրապարակը, ուրկէ «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողութեամբ և զանգերու ղօղանջին ընդմէջէն ուղղուեցաւ Տաճարի մեր Տեռչարանը՝ ուր դիմաւորութեան եկողներ պատուասիրուեցան։

— Կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Ծննդեան Տաճար։ Ս. Այրի ուխտէն ետք, Տաճարի մեր բաժնին մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու ճրագալոյցի արարողութիւնը, որոնց աւարտին Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Այրին մէջ։ ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղամ Աբղ. Ջաքարեան։ Ապա, Ս. Պատրիարքը նախագահեց Ս. Ծննդեան մեծահանդէս նախատօնակին։ Արարողութիւնները վերջ գտան մայրամուտին, երբ Միաբանութիւնը, զգեստաւորեալ և երգեցողութեամբ, շինազարդ գաւիթէն անցնելով բարձրացաւ Ս. Ծննդեան հայավանքը՝ ընթրիքի։

— Գիշերուան ժամը 10ին, Միաբանութիւնը արթուն է դարձեալ, կէս ժամ ետք սկսելու համար գիշերային պաշտամունքը՝ Տաճարի հայկական բաժնին մէջ։

— Իսկ Երուսաղէմի մէջ, ճրագալոյցի արարողութիւնը պաշտուեցաւ Ս. Յարութեան Տաճարի Ս. Գերեզմանի առեանին մէջ, կ. վ. ժամը 1.30ին։ Իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ։ ժամարարն էր Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ. Թարիլուսեան։ Ապա Գերշ. Տ. Նորայր Եպս. նախագահեց Ս. Ծննդեան նախատօնակին։ Արարողութիւնները աւարտեցան ժամը 4ին՝ Տաճարի մեր Տեռչարանին մէջ։

— Յաջորդ առաւօտ ժամը 4-8, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտուեցան Ս. Ծննդեան հանդիսութիւնները։ Ս. Պատարագը մատոյց, ըստ սովորութեան, Ս. Հրեշտակապետաց վանքի Տեսուչը՝ Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Ջղջանեան, որ քարոզեց «Իսկ յորժամ քաղցրութիւն և մարդասիրութիւն Փրկչին մերոյ Աստուծոյ յայտնեցաւ» բնաբանով, ըսելով թէ Մսուրին մէջ յայտնըւող բարութեան, գութին և սիրոյն պէտք է փոխադարձել մարդոց երախտագէտ և գործնական սէրը։ Իսկ Գերշ. Տ. Նորայր Եպս. նախագահեց «Ջրօրհնէք»ի սրտագրաւ արարողութեան։

digitised by A.R.A.R.@

● Եշ. 19 Յուն. — ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ: Կէս գիշերին, խորհրդաւոր զանգահարութենէ մը ետք, Միաբանութիւն և ներկայ հաւատացեալներ իջան Ս. Ծննդեան Այրը՝ ուր կատարուած արարողութիւններէն մաս մը, մօտ մէկ ժամուան տեւողութեամբ, ձայնասփռուեցաւ Յորդանանի ռատիոկայանէն։ Ս. Պատրիարք Հայրը, այդ միջոցին, կարդաց համայն հայութեան ուղղուած իր պատգամը (որ լոյս տեսաւ Պաշտօնաթերթիս Նախորդ թիւին սկիզբը) և վերադարձաւ Երուսաղէմ. իսկ մնացեալ հանդիսութեանց նախագահեց Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան, որ, Տաճարի մեր բաժնին մէջ, Հոգշ. Տ. Վրթանէս Աբղ. Գալայճեանէ մատուցուած Ս. Պատարագէն ետք, հանդիսապետեց «Ջրօրհնէք»ի արարողութեան և ապա հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Ս. Այրին մէջ։

— Գիշերային այս հանդիսութեանց ներկայ եղան նաև օտար պետական և այլ բարձրաստիճան անձնաւորութիւններ, ինչպէս՝ Երուսաղէմի Մուհաֆըզը և իր փոխանորդը, Յորդանանի Ընդհ. Ապահովութեան Պետը, Երուսաղէմի Ընդհ. և Հին Քաղաքի Ոստիկանապետները, Բեթղեհէմի կառավարիչը, Քաղաքապետն ու Ոստիկանապետը, Անկլիքան Արքեպս.ը՝ իր հետևորդներով, Երուսաղէմի Անգլիական, Ամերիկեան և Սէուտական Արաբիոյ Հիւպատոսները։ — Արարողութիւնները վերջ գտան արևածագին, երբ Միաբանութիւնը, երէկուան նման, զգեստաւորեալ և երգեցողութեամբ, սիւնազարդ գաւիթէն անցնելով բարձրացաւ Ս. Ծննդեան հայավանքը՝ նախաճաշի։

— Կարճ դադարէ մը ետք, Միաբանութիւնը, երէկուան կարգով, ճամբայ ելաւ դէպի Երուսաղէմ, ուր հասաւ ժամը 9ին և բարձրացաւ Պատրիարքարան, ուր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Ս. Ծննդեան աւետիսը տուաւ ամէնուն։

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Հայրիկ Եպս.։

● Ուր. 20 Յուն. — Յիշատակ մեռելոց: Ընկալեալ սովորութեան համաձայն, Ս. Ծննդեան տօնին յաջորդ օրը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ կը մատուցուի Ս. Պատարագ և պատարագիչը կ'ըլլայ Ս. Աթոռոյս Աւագ Թարգմանը։ Այս տարի, Թարգման Հայրսուրբը, Տ. Օհան Վրդ., արձակուրդով բացակայ ըլլալուն, պատարագեց իր փոխանորդը՝ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան։ Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ համայն ննջեցելոց հոգիներուն համար, նախագահութեամբ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.ի։

● Կիր. 22 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Խորանի Ձախակողմը գտնուող Ս. Աստուածածնայ խորանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբիկեան։

● Դշ. 25 Յուն. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը։

● Եշ. 26 Յուն. — Անուանակոչութիւն Տեառն: Առաւօտեան ժամը 8.30ին, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհաճեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Գերշ. Հանդիսապետ Սրբազանը մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ։ Վանք վերադարձին, Հայոց Թաղի մուտքէն, Միաբանութիւնը տօնին շարականը — «Լոյս ի լուսոյ» — երգելով յառաջացաւ դէպի Մայրավանք և բարձրացաւ Պատրիարքարան՝ ուր կը սպասէր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, որ, զգեստաւորուելով, կը նախագահէ «Տնօրհնէք»ի արարողութեան։ Կ'օրհնուին Ս. Աթոռոյս բարիքները և կ'երգուին Ս. Ծննդեան և Մկրտութեան շարականներ, իբրև փակումը Ծննդեան տօներու շրջանին։ Ապա, ժամօրհնող Հայրսուրբին գլխաւորութեամբ, նոյն արարողութիւնը կը կրկնուի մառանին, փուռին, սեղանատան և ի վերջոյ խոհանոցին մէջ՝ ուր կ'օրհնուի օրուան յատուկ հերիսայի աւանդական ճաշը։

● Ուր. 27 Յուն. — Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպս.։

● Շբ. 28 Յուն. Ս. Յովհաննու Կարապետի ծննդեան տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Խորանին Աջակողմը գտնուող Ս. Յովհ. Կարապետի խորանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղամ Աբղ. Ջաքարեան։

● Կիր. 29 Յուն. — Բարեկ. Առաջաւորի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան։ Ս. Ծննդեան խորհուրդին շուրջ իմաստալից քարոզ մը խօսեցաւ Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբիկեան։ Քարոզը և Ս. Պատարագի արարողութենէն մաս մը, ժամը 9-10, ձայնասփռուեցան Յորդանանի ռատիոկայանէն։

---

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Կիր. 8 Յուն. — Օրթոտոքս Եկեղեցւոյ Ս. Ծննդեան տօնին առթիւ, կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլուխ Միաբանութեան, շնորհաւորութեան գնաց Յունաց Պատրիարքարան։ Իսկ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., ընկերակցութեամբ Հոգշ. Հայրերու, այցելեց Ղպտոց, Ասորւոց և Հաբէշաց վանքերը։

● Շբ. 14 Յուն. — Իսլամաց Միրաճի (Մուհամմէտի համբարձման) տօնին առթիւ, կէսօրէ վերջ, Իսլամական Քօնկրէսին կողմէ կազմակերպուած հանդէսին և ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Հայրիկ Եպս., Հոգշ. Տ. Գեղամ Աբղ. և Տիար Կարպիս Հինդլեան։ Հանդիսութեան կը նախագահէր Նորին Վեհ. Հիւսէյն Թագաւորը։

● Կիր. 15 Յուն. — Ծառի տօնին առիթով, կէսօրէ առաջ, Գեթսեմանիի Լատինաց պարտէզին մէջ կատարուած ծառի տնկման հանդիսութեանց ներկայ եղան Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. և Տիար Կ. Հինդլեան։ Հանդիսութեանց կը նախագահէր Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորը։

digitised by A.R.A.R.@

— Նոյն օրը, Ն. Վսեմ. Վարչապետ Պահճաթ Թալհունիի կողմէ, իսլամական Գոնկրէսի պատուիրակներուն ի պատիւ, Ամպասատոր պանդոկի մէջ տրուած թէյասեղանին ներկայ գտնուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Յակոբ Վրդ.ի և Տիար Կ. Հինդլեանի։

● Բշ. 16 Յուն. — Նոյն առթիւ, իսլամական Գոնկրէսի Պիւրոյի կողմէ, Ամպասատոր պանդոկի մէջ տրուած թէյասեղանին ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. և Աւագ Թարգմանի փոխանորդ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ.։

● Դշ. 18 Յուն. — Ս. Ծննդեան տօնին առիթով, առաւօտեան ժամը 7էն սկսեալ, Իսրայէլի զանազան քաղաքներէն մօտ 250 հայեր սահմանը անցնելով ժամանեցին Ս. Քաղաք, և Ծննդեան տօնի մեր հոգեպարար արարողութիւններուն ներկայ ըլլալէ ետք, յաջորդ օրը կէսօրէ վերջ վերադարձան Իսրայէլ։

● Ուր. 20 Յուն. — Ս. Ծննդեան տօնին առթիւ, կ. ա. ժամը 9.30էն սկսեալ, յաջորդաբար Պատրիարքարան շնորհաւորութեան եկան հետեւեալները. — Յունաց և Լատինաց Ս. Պատրիարքները և Ֆրանչիսկեանց Կիւսթոսը՝ իրենց Միաբանութեան անդամներով, Ղպտոց Եպս.ը, Ասորւոց և Հաբէշաց Եպս.ներու փոխանորդները՝ հանդերձ Միաբանութեամբ, Անկլիքան Արքեպս.ը և Արաբ-Անկլիքաններու Եպս.ը, Յոյն-Կաթոլիկներու և Մարոնիթ համայնքի Պատր. Փոխանորդները, Պապական Նուիրակը, Լուտերականներու Երէցը, Վսեմ. Կառավարիչը, Վսեմ. Քաղաքապետը, Վսեմ. Ոստիկանապետը, Հիւպատոսական Մարմիններէ ներկայացուցիչներ, զինուորականներ և այլ ականաւոր անձնաւորութիւններ։

● Եշ. 26 Յուն. — Արաբական Զարթօնքի տօնին առթիւ, կէսօրէ առաջ ժամը 10ին, Գերշ. Տ. Հայրիկ Եպս. և Տիար Կ. Հինդլեան ներկայ եղան Հարամ Շէրիֆի շրջափակին մէջ, Զարթօնքի հիմնադիր Իշխան Հիւսէյն իպն Ալիի դամբարանին մօտ կատարուած արարողութեան և Էվգաֆի Վարչութեան կողմէ՝ Էվգաֆի շէնքին մէջ սարքուած թէյասեղանին։

● Շբ. 28 Յուն. — Կէսօրէ վերջ, յանուն Պատրիարքարանի, Տիար Կ. Հինդլեան ներկայ եղաւ Անգլիական Հիւպատոս Մր. Պրաշի քաղաքէս մեկնումին առթիւ, Հիւպատոսարանի տան մէջ տրուած ողջերթի ընդունելութեան։

## «ՍԻՈՆ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ազգային Եկեղեցական Տագնապի խաղաղ Լուծումը — *Բիւզանդ Եղիայեան։ Նուէր Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն։ Անթիլիաս, Տպ. Կաթղ. Կիլիկիոյ,* 1960, *էջ* 60։

*Անթիլիասի Դպրեվանքէն ստացանք.* —

*ա)* Պատմութիւն Ընդհանուր Եկեղեցւոյ *(Ա. Գիրք) — Դկն. Յակոբ Թոփճեան և Բիւզանդ Եղիայեան։ Մեքենագրուած Անթիլիաս,* 1955, *էջ* 116։

*բ)* Քննական Պատմութիւն Ս. Գրոց *(Բ. Տարի) — Բիւզանդ Եղիայեան։ Մեքենագրուած Անթիլիաս,* 1950, *էջ* 143։

*գ) Նոյնին Գ. Տարին, էջ* 150։

Հոգեբանութիւն — *Մ. Իշխան (Նուիրատու)։ Մեքենագրուած Պէյրութ,* 1955, *էջ* 46։

*Անթիլիասէն՝ Տ. Ներսէս Վրդ. Բախտիկեան կը նուիրէ.* —

*ա)* Տակէ Տակ *(Բ. Գրքոյկ) — Պետրոս Քարծայր։ Մատեն. Ապրիլեան Եղեռնի թիւ* 6։ *Անթիլիաս, Տպ. Կաթղ. Կիլիկիոյ,* 1960, *էջ* 79։

*բ)* Կամուրջ մը Յուշերը — *Մինաս Ա. Թաթարեան։ Մատեն. Ապրիլեան Եղեռնի թիւ* 7։ *Անթիլիաս, Տպ. Կաթղ. Կիլիկիոյ,* 1960, *էջ* 44։

تصدرها – بطريركية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول – صاحب النيافة رئيس الاساقفة هايكازون أبراهميان
فبراير ١٩٦١ تطبع في مطبعة دير الارمن – القدس العدد ٢

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Archbishop Haïgazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

digitised by A.R.A.R.@